

ՄԱՏԵՆԱԻՕՍԱԿԱՆ

Մ. 8. Շւօտ. Քրդերը Ցանկաց-Հայաստանում. ազգագր. Նիւթեր. հ. ա. Ա. Պ. Բարդ. 1905

Պ. Շւօտի այդ աշխատութիւնը բաղկացած է երկու մասուց. 17 եր. յառաջարանից և 200 երես բուն նիւթից՝ Ցանկաց-Հայաստանում բնակուող քրդերի մասին աշխարհագրական և պատմական տեղեկութիւններ:

Քրդերը, Մարաստանից մնացած այդ մի բուռն ժողովուրդը, որ նոյնպէս ցրուած է երեք տէրութեանց մէջ, ինչպէս և հայ ազգը, հայ ժողովրդի բնական դրացիներն են եղել միշտ և հէնց դորա համար էլ արժէ, որ մեր բանասէրները առաւել լուրջ ուշագրութիւն դարձնէին դոցա կեանքի ուսումնասիրութեան վերայ, մանաւանդ որ շատ տեղերում նոցա կեանքը բոլորովին նոյնենաման է մերին և ենթադրել է տալիս, որ նոցա մի մասը բռնի կերպով մահմեդականացրած հայեր են: Առհասարակ խրախուսանքի արժանի է պ. Շւօտի աշխատութիւնը որպէս բազմակողմանի նիւթ քրդերի կենցաղի ուսումնասիրութեան:

Բայց պ. Շւօտի այդ երկը նշանաւոր է մի ուրիշ կողմից. նորա յառաջարանը լոյս է սփռում մեր կեանքի վիթած ու նեխուած մի երևոյթի վերայ, նա անողոք կերպով մեր-կացնում է մի գրական խոշոր գողութիւն, որ իրը նմուշ կարող է ծառայել հակառակ մամուլի գրական վարք ու բարքին և նոցա ազնուութեան չափին դէպի ուրիշի սեպհականութիւնն ու պատիւը. պ. Շւօտի այդ երկը լոյս է տեսել ոռւսերէն լեզուով որպէս քրտնաշան արդիւնք... Հ. Առաքելեանի:

Թողնենք, որ Շւօտը ինքը պատմի մեզ գործի էութիւնը.

«Ներկայ աշխատութիւնս, աննշան փոփոխութիւններով, այս տարի հրատարակել է ոռւսերէն լեզուով «Մուսաց ԿԱՅ-ՍԵՐԱԿԱՆ Աշխարհագրական Ընկերութեան» Կովկասեան Բաժանմունքը, ուր ներկայացրել է Պ. Համբարձում Առաքելեանը:

Այդ գրքոյին, որ գրական փասթումիմալի խաթեր համար կը-
կը «Եսրդե առ պերսի» վերնագիրը, ի մեծ զարմանս իմ,
ստորագրել է Պ. Հ. Առաքելեանը... որպէս հեղինակ:

Պ. Առաքելեանը, 1902 թուի ամառը, Անապայում, ինձ
յայտնեց, որ գնալու է Համբուրգում գումարելիք Արևելագէտ-
ների ժողովին և կըցանկայ ունենալ Քրդական ազգագրութիւնը
ժողովում կարգալու համար: Ես պատրաստականութիւն յայտ-
նեցի՝ տալու մի համառօտ ուսումնասիրութիւն, ժողովում
կարդալու եւ վերադարձնելու պայմանաւ: Պ. Առաքելեանը
վեր առաւ այդ աշխատութիւնս և ասաց.—Արեւելագէտների
XII Մ' ջազգային ժողովում կըկարդամ այդ որպէս Զեր աշխա-
տութիւնը եւ այնուշետե էլ կըմիջնորդեմ ոռասաց Կ. Աշխ. Ընկ-
առաջ, որպէս զի նիւթականապէս Շնարաւորութիւն տան
Զեզ շարունակելու այդ աշխատութիւնը եւ կազմելու քրդա-
կան կատարեալ ազգագրութիւնը, ապա կըվերադարձնեմ
Զեզ ծեր ծեռագիրը:

Այսուհետե անցան ամիսներ ու տարիներ և մենք մի քա-
նի անգամներ հանդիպեցինք Պ. Առաքելեանին հետ «Մշակի»
խմբագրատանը, Թիֆլիսում: Չնայած իմ մի քանի պահանջն՝
վերադարձնելու ինձ ձեռագիրս (որի սկագրութիւնը չունէի,
որովհետեւ հապճապով էի կազմել և ժամանակ չէի ունեցել ար-
տագրելու) Պ. Առաքելեանը «այսօր-վաղը» ասելով կը ձգձգէր:
Այս տարի մի անգամ էլ յայտնեց պարոնը, որ իմ աշխատու-
թիւնս ներկայացրել է վերոյիշեալ Ընկ. Կովկ. բաժանմունքին
հրատարակելու համար: Վերջերս կստանամ այդ գրքոյկը և կը
տեսնեմ, որ մեր կարճահասակ պարոնը փառաւորապէս տիրա-
ցել է նրան և ստորագրել «Ա. Ա. Առաքելյան»...

Մի քան, որ մազաշափ պատիւ բերել չէ կարող ինքն ի-
րեն գրական գործչի տեղ դրած Պ. Առաքելեանին, նու դիմեցի
պարոնին առանձին նամակով և բացատրութիւն պահանջեցի
նրա այդպիսի վերաբերմունքի համար դէպի իմ սեպհականու-
թիւնը: պարոնը փոխանակ արդարութեամբ խոստովանելու
իրա մեղքը՝ տակաւին համարձակուել է, բոլորովին անտեղի
և անիրաւացի, հայհոյել մի յայտնի հասարակական գոր-
ծիչ-փիլիսոփայի, որի առջև լեզու իսկ չէ կարող թրջել
որևէ Առաքելեան: Մենք կըպահենք այդ 7 երեսանոց նա-
մակ հայհոյաբանութիւնը, որ կըկրէ «28 սեպտ. 1904 թ.
թասկանը եւ Հ. Առաքելեան» ստորագրութիւնը:

Մեղքի մէջ չիմնալու համար պէտք է յայտնեմ, որ Պ.
Առաքելեանը «Եսրդե առ պերսի» գրքոյկում ունի մի քանի

տող ինքնուրոյն գրուածքը, այսինքն ինձմէ առածէն դուրս, որը սակայն երբէք իրաւունք չէր տար պարոնին հեղինակ կոչուելու Սակայն պարոնը այնքան էլ միամիտներէն կամ անհեռատեսներէն չէ. նա դիմել է մի քանի արդարացուցիչ (?) միջոցների. —

Նախ՝ որովհետեւ Պ. Առաքելեանը, իրա ասածին նայելով, զիտէ Պարսկաստանը աշխարհագրականապէս, մասամբ և գուցէ ազգագրականապէս, հետևաբար և պարսկաստանում գտնուող ըրդերի մասին. էլ թերևս ունենալ մի փոքր ծանօթութիւն՝ վեր է կացել պարոնը և յիշելով ինչ որ ճանապարհորդութիւններ, բառեր, բառեր և էլի բառեր... իրան հոչակել ուսումնասիրող ըրդական կեանքի: Պարոնն ասում է, որ ինձմէ այդ նիւթերն ստանալէ առաջ «սոյն ըէֆէրատը» (իմա Կորդы և առաջին կարդացի 1900 թւին Պարիզի կօնգրէսում, որ տպուած է... նոյն ըէֆէրատը տպուած է 1889 թւին «Ազգագրական Հանդէսի մէջ»)... մի բան որ սուս է ոսով-գլխով...

Երկրորդ՝ պարոնը զետեղել է յիշեալ գրքոյկում հետեւալ տողերը:

«Затѣмъ, одинъ изъ моихъ знакомыхъ, посвятившій себя тоже специально изученію быта о жизни курдовъ въ Турецкой Арmenіи, учитель Шводъ, даставилъ мнѣ въ прошломъ же году, посоль конгресса Ориенталистовъ (գարձեալ սուս. վերեւ եւ նկատեցի. որ իմ աշխատութիւնս առաւ պարոնը ուղղակի այդ կոնգրէսում կարդալու նպատակով) պѣнаый матеріалъ, при сличеніи котораго съ собраннымъ мною матеріаломъ оказалось, что обычай, нравы, бытовыя черты какъ у турецкихъ, такъ и у персидскихъ курдовъ почти нитѣмъ не отличаются. Матеріалъ Швода даль мнѣ возможность расширить программу моихъ изслѣдованій и представить уже Кавказскому Отдѣлу Императорскаю Русскаго Географического Общества болѣе полный и подробный очеркъ курдовъ въ этнографическомъ отношеніи.» Որքան շնորհակալ պիտի լինէի, պարոն, եթէ նեղութիւն կըած Ալինէիք ձեր հեղինակութեան մէջ (?) այդքանն էլ յիշելու:

Երրորդ՝ բուն ազգագրական ժասում կըտեսնեմ, որ Պ. Առաքելեանը նոյնիսկ ըրդերէն լեզուով գրածս գարձուածքները կը շահագործէ. մինչդեռ ըրդական այն բարբառները, որ ես գործ եմ ածել այդ աշխատութեան մէջ՝ անծանօթ են պարոնին, եթէ նոյն իսկ ընդունենք, որ նա տեղեակ է Պարսկաստանի քրդերի բարբառին «...я былъ знакомъ съ мѣстнымъ языкомъ

и условиями» կասէ պարոնը Պարսկաստանի մասին գրելիս Իմ գործածած դըմըլերէնը (de me li) և գրըմաններէնը ւ կերտանդի) բոլորովին տարրեր են բրդական այն բարբառներէն, որոնք գործածական են Պարսկաստանում, Ռուսաստանում և Վասպուրականում: Այդ բանը կը խոստվանի և յայտնի քրդագէտ պ. Յակոբ Դաղարեանը: Ասածներիս իրը ապացոյց բերեմ «շուրջ» և պահպանում: Այդ բանը կը խոստվանի յայտնի քրդագէտ պ. Յակոբ Դաղարեանը:

ա. Եացъ даишъ=հրաւէր հարսանեաց.

բ. Բենի, լիյ=բաւ է, տօ.

գ. Էյ, дости, կայն ետք броше миъ=Այ խնամի, ծախիր ինձ աղջիկ:

դ. Կենէն khale եմ եր ռակո ethia=Աներոջս աղջիկը եկ ննջիր այստեղ:

ե. Allah·itchoun vannan, ki jené ema կենէ եյ=Յանուն Աստուծոյ կերդուեմ, որ իմ կինը կոյս էր.

զ. Կենէ ետև halal nan vord ou=աղջիկ հալալ հաց է կերել:

Բաւական են օրինակները: Դրանք նախադասութիւններ են, որ պ. Առաքելեանի պապն էլ լսած չէ թերևս: Բացի այդ ես հաւատացած եմ, որ պ. Առաքելեանը նոյն իսկ գըրմաններէն քրդերէնը չգիտէ, որովհետև այդ գրքոյկում գըրմաննի խօսքերն այլասիրուած են, ուղղագրութեան աններելի սխալներ արած..., մի բան, որ կապացուցանէ պ. Առաքելեանի տգիտութիւնը գըրմաններէնում:

Առ այժմ ես կը բաւականանամ այսքանով, վստահ որ ընթերցողն արդէն կազմեց մի փոքր գաղափար պ. Առաքելեանի վերաբերմունքի մասին դէպի ուրիշի սեպհականութիւնը:

Ի զուր չէինք անուանել այդ տեսակներին «մտաւոր տըզը բուկ»:

Այս այն անձինքն են, որոնք քիթը ներս են կոխում հոգեոր և աշխարհիկ ամենն գործերի մէջ և կառավարում, ուրիշների մտաւոր աշխատանքով ապրում և միշտ էլ ուրիշներին հայ-հոյում:

Եւ այսպիսի անմաքուր ձեռներ վստահանում են կեղտուտել ուրիշ գործողների բղանցները:

ՀԱՅ

«Հայրենիքի կարօտը», Ա-Դօ-ի, Ս. Պ. Բուրգ, 1905

Ով հասարակութեանը տալիս է մի տպագրական երկ, նա չպիտի մոռանայ որ բացի շատ մանր-մունը պարագաներից